

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

W B T U. C P Z U. C G K P.

Ազգային անկախութեան .  
(Յօդուած երկրաբարդ .)

Հայերիս մէջ ընդհանրացած կարծիք է, թէ աղքա-  
յին անկախութիւնն այն պատճառով պէտք է լինի  
հայկական յեղափոխութեան նպատակը, որ մի ժա-  
մանակ հայ ազգը եղել է ինքնուրոյն ու անկախ  
ազգ, որ ունի իր անցեալը, իր պատմութիւնը, ունե-  
ցել է իր թագաւորութիւնը, իր երկիրը, ուր մինչև  
իսկ „Եսի տապանն է իշել և մարդկութեան օրօրանը  
եղել”, և, ուրեմն, այսօր էլ հայը պէտք է ձգտէ „վե-  
րական գնել իր նախկին անկախութիւնը, փառքը,  
պէտք է զատվէ տաճկից հաստատելու համար իր հա-  
րազատ տէրութիւնը” ։ Այնք հայ ենք և ոչ այլազգի,  
— բացականչում են այդ կարծիքի տէրերը, — և պէտք  
է ունենանք մեր սեփական երկիրը, մեր տէրութիւնը,  
մեր փառքը, ատելի է մեզ օտարը և նրա լուծը և  
այն . . . ։ Այդ ազգասիրական փքուն Փրազները զի-  
տեն հալիցներ, խմոր գարձնել հայ ազգասէրի սիրաը  
և ունենում են իրենց „հմայիչ” ազգեցութիւնը հայե-  
րի վրայ, մինչեւ անգամ հոսեցնելով ։ Պայունների աշքերից արցունքներ, թէև շատ ուշ մնաց առ ար-  
ցունքներ, բայց, ընականաբար, միւս կողմից կորա-  
ցնում են նրանց միտքը և վարակում նրանց ազգասի-  
րութեան տեն դով . . . Բայց կարող է արդեօք ազգա-  
յին անկախութեան ձգտման բէզօն (raison), հրմք  
լինել այն, որ մի ժամանակ հայ ազգն անկախ է  
եղել Ինչ կասեիք դուք այն մարդուն, որ մի ժա-  
մանակ հարուստ է եղել բայց յետոյ սնանկացել է  
և այսօր գալիս ու ձեզ ասում է թէ ևս իրաւունք  
ունեմ հարուստ լինելու այսօր, որովհետեւ մի ժա-  
մանակ հարուստ էի”։ Անշուշտ դուք կը ծիծաղէք նը-  
րա վրայ ։ Մեր այն ազգասէրների տրամաբանութիւնն  
էլ այդ նախկին հարուստի և յետոյ սնանկացածի տրա-  
մաբանութիւնից հեռու չէ գնացել

Ուակայն դա դեռ բաւական չէ։ Ազգասիրութեան

տենդով այդ բանվածներն աւելացնում են թէ „ազգային անկախութիւն ձեռք բերելով, հայ ժողովուրդն այլ ևս ենթակայ չի լինիլ հարստահարութեան ու կեղերան և կը լինի բազգաւոր ու ազատ”։ Երանք կարծում են, թէ հայ ժողովրդին թշուառութիւնից ազատելու համար բաւական է տալ նրան ազգային անկախութիւն Երանք կարծում են, թէ հայ յեղափոխականի պարտականութիւնն է մտածել միմիայն այդ անկախութիւնը ձեռք բերելու վրայ, որը և ալէտը է լինի նրա միակ նպատակը։ Այ գիտենք թէ արդեօք արժէ՞ լուրջ կերպով վերաբերվել դէմի այն խօսքը, թէ անկախութիւնը վերջկը տայ հարստահարութեան և ժողովուրդն աղատ կարծիքի միամտութիւնը։ Պէ՞տք է արդեօք այդ պէս ասողներին մատնանիշ անել տաճկի լծից աղատ ված Յունաստանի, Արևմանիայի, Բօլգարիայի և այլն վրայ և յիշատակել այդ երկիրներում այժմ՝ ուրիշ կերպարանքի տակ տեղի ունեցող հարստահարութիւն ներն ու ճնշումները, որ կատարվում են նոյն իսկ „հարսդատ” կառավարութեան „քաղցր լծի” տակ, նոյն իսկ հայրենակից ունեօք դասակարգի ձեռքով . . . . Դեռ երբէ՛ր պատմութիւնը չէ ցոյց տվել մէկ այն պիսի օրինակ, որ լոկ ազգային անկախութիւն ձեռք բերելով մի ժողովուրդ դառնար բազգաւոր Դեռ երբէ՛ր պատմութիւնը չէ ցոյց տվել մէկ այնպիսի օրինակ, որ բռնակալ լծից մի ժողովրդի լոկ քաղաքականալէս զատումը միանգամայն լուծէր նրա հասարակական տնտեսական բարդ ու կնճռուս խնդիրները . . . .

ինչից է առաջանում ազգային անկախութեան պահանջը, ո՞րն է դրա հիմքը և ի՞նչպէս պէտք է նա լուսաբանվէ, որ պարզուոց կերպով հասկանանք այդ երկու թի հասարակական պատմական նշանակութիւնը: Թերեւս այդ հարցերի լուսաբանութիւնն օգնէ մեզ թունդ ազգասիրութեան տեսնդով առ կեզծ զարակվածների միտքը պարզելու, նրանց վիճակը թեթեւ ացնելով, և իրենց վերացական բացականչութիւններից ու միամիտ երազների աշխարհից իջեցնելու իրական հողի վրայ:

քաղաքակրթութեան աստիճանը սրբազրու համար պէտք է նայել, թէ այդ ազգի մէջ արդիւնագործութեան ինչ պիսի կերպեր են տիրապետում և որշափ ընդարձակ է այդ կերպերի ծաւալը՝ Այն ազգերը, որնց մէջ գոյութիւն ունի խոշոր արդիւնագործութիւնը, այսինքն մեքենագործ, գործարանական արդիւնագործութիւնը, յայտնվում են կրկտուրապէս աւելի զարգած, կանգնած են քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճանի վրայ, ինչպէս օրինակ Անգլիան, Ֆրանսիան և այլն, բան այն ազգերը, որնց մէջ արդիւնագործութեան տիրապետող կերպերը մասն են, այսինքն անհանական են, ձեռագործ են, նահանականական են, ինչպէս օրինակ Հայ ժողովուրդը՝ Այն գէորգում՝ երբ որ այս կամ այն ազգի մէջ մանր արդիւնագործութեան կերպերը սկսում են կամաց կամաց քայլային, այլ ես չը կարողանալով բաւականաշափ արդիւնքներ տալ ժողովրդի ուտելու, հանգնիւլու, աշխատելու և այլ ալետքերի համար, այդ ժամանակ բը նական կերպով սկսում են զարգանալ այդ ազգի մէջ խոչը արդիւնագործութեան կերպերը, Եւ կամ թէ այն գէորգում՝ երբ որ մէկ ազգի խոչը արդիւնագործութեան արդիւնքները սկսում են մուտք գործել ու չու կայ բանալ մէկ ուրիշ այնպիսի ազգի մէջ, որը զեռ զտնվում է մանր արդիւնագործութեան շրջանում, այս վերջինը չէ կարողանում զիմանալ առաջնի մրցման, սկսում է քայլային և նրա ազգեցութեան տակ կամաց կամաց ընդունել նոր կերպեր, այսինքն նոյն երան խոչը արդիւնագործութեան կերպերը՝ Այդ երկու զէաբումն էլ այն ժողովուրդը, որի մէջ մանր արդիւնագործութեան կերպերը բայլայման վրայ են և ոկրում է մուտք գործել խոչը արդիւնագործութիւնը, պահանջ է զգում այնպիսի հասարակական քաղաքա, կամ զրութեան ու կարգերի, որոնք խոչը արդիւնագործութիւնը, պահանջ է զգում այնպիսի հասարակական քաղաքա, կամ զրութեան ու կերպերի կիրառութիւններ, ծովեզրային առեւար բական քաղաքներ, չոգենաւուներ, խճուզիներ, ճեռաղրական թելեր, կանօնաւոր փոստ և այլն, և այլն), մեծ շուկաներ, գործարաններ, բանկեր բանալու, առեւտրական, ակցիօններական ընկերութիւններ հաստատելու, բը նական ու արաւեստական բերքերի ազատ արդիւնարե բութեան իրաւունքն ունենալու, քաղաքներն ընդարձակութիւններ կամ յարմարութիւնները չառացնելու և այլն, և այլն Այդ բոլոր պահանջները փոխադարձ բար պահանջմանաւորում են միմեանց իրագործումը՝ Այդ իրագործման համար անհրաժեշտ են հասարակական քաղաքական այնպիսի նոր կարգեր, որոնք վերացնեն այն

բոլոր նախկին հասարակական քաղաքական պայմանները, որ միրոյիչած պահանջների իրագործման, ուրեմն խոչը արդիւնագործութեան զարգացման արգելը են: Եթէ արգելը չարունակեն զյութիւն ունենալ և աւելի ու աւելի զգացնեն իրենց ծանրութիւնը — կը չնչէ յեզարարութեան ժամը: Եւ զա անխռուսափելի է, որովհետեւ հասարակութիւնն արգելն պէտք ունի հասարակական նոր օրէնքների, նոր կարգերի, որ նրան միջոց տային առաջդիմելու և զոհացնելու իր կեանքի բական պահանջները, պահանջներու պէտք կայ զիմելու արդիւնագործութեան աւելի կատարելագործված միջոցների, այլապէս հասարակութիւնը մասնաւած կը մինի ազգատութեան ու քայլայման Այդպիսի հանուրական վայր կեանին պայտեցաւ ֆրանսիական Մեծ Բնդափոխութիւնը, որ հիմնավորին յեզարչեց հանրակեցութեան նախկին բոլոր թէ՛ հասարակական, թէ՛ քաղաքական և թէ՛ մասնաւոր (intime) կերպերը: Կարծանելով զրանց, Յեղափոխութիւնը, — ինքը լինելով արամարանական արդիւնքներ բութուած գասակարգի բնական ձգտման այն է վշրել կապիտալին հաշկանոց հասարակական շղթաները, — յայ տարարեց աշխարհում մարդկային և քայլայման իրաւութեան ու հասարամեց այնպիսի հասարակական քաղաքական նոր կարգերը նոր օրէնքներ ու նոր սկզբունքներ, որ կապիտալիստական խոչը արդիւնագործութեան միջոց ալին աղաս կերպով զարգանալու:

Մասնաւորելով մեր խոռը հայ ժողովրդի վրայ, կը ունենեմք, որ նրա մէջ մանր արդիւնարե բութեան կերպերը կամաց կամաց քայլայման են Արծեստաւորների էստավները բայլայման են, անհատ արհեստաւորները արդիւնքներով անկարող է մրցել երկրում մուտք գործող եւ բարպական խոչը արդիւնագործութեան աւելի կատարելագործված ու աւելի աժամ, քան արհեստաւորի, արգելների հետ, զիմելու պարտ քերի, հարկերի և այլ սրամառանով ընկած են կատար ունեների վաշխառուների, վաճառականների ու այլ և այլ հարատահարազների ձեռքը, և կամ մշակութեան պայմանների ծանրութեան, բերքերը վաճառելու ծանր անշարժաւութիւնների ու ոչ ծեռնառ պայմանների սկանանաւութիւնը անհատ անհատուց ընկած են և զրանց չորհով զիւկացու նիւթական կացութիւնը սաստիկ ծանրացած: Չունենալով միջոց նոյն իսկ երկրի մէջ տաճ կաց Հայաստանում որիշ գործի ձեռնարկելու պարտ քերը տալու համար կամ աւելի նուազ նեղված նիւթական վիճակ ունենալու, կամ ժամանակի պահանջների համեմատ յարմար գործի ձեռնարկելու համար, պանդիստում է զիւկացին, պանդիստում է արհեստաւորը,

պանդիտում է՝ քաղաքացին և լքցնում են օստար երկիր  
ների խնդրուարիստան քաղաքները, բայ մեծի մասն  
գառնալով օրագործ աշխատասորու նայն խոկ ուստահայերի  
մէջ մուսոր զործած և այնպէս արագ կերպով զարգա  
ցող խոչը կազիտուլիտուական արդիւնագործութիւնն  
է զլիասորատիւ կրանում նրանց և դարձնում իր ու  
խափառոր սուրուկ, պրօլետարին ժողովրդի բնդ հանուր  
վիճակից առաջանում են հետեւեալ զրութիւնները։ —  
1) Մանր արդիւնագործութեան կերպերը սկսել են բայց այ  
վել և այժմ տեղի ունի մինչերին կերպարանափառութիւն  
գէտի խոչը արդիւնագործութեան կերպերը։ 2) Հայ ժո  
ղովուրդն ընկած է նիւթաբէս և պահանջ կայ բարձրա  
ցնելու աղջային նիւթական հարատութիւնը, որ գոյու  
թիւն ունենարու միակ անհրաժեշտ պայմանն է։ 3) Երկա  
յումն աղջային նիւթական հարուութիւնը բարձրացը-  
նել կարելի է միմիայն խոչը արդիւնագործութեան մի-  
ջոցով, երկրի բնական ու արաւեստական բերքերն ու ար  
դիւնքներն աղատորէն չահազործերով։ 4) Մի և նայն ժամա  
նակ բանապետական կարգերն ու հասարակական կացու  
թեան պայմանները մշտական արգելք ու խոչնզու և  
անտեսական զարգացման, տնտեսական աղատութեան  
այդ անհրաժեշտ պահանջի իրագործմանը Այդ բոլորի  
հիման վրայ հայ աղջային անկախութեան, տաճիկ  
հասալարութիւնից քաղաքականատէս զատիվելու, ինքնու  
րոյն մարմին լինելու և խոչը արդիւնագործութեան ա-  
ղատ զարգացման համար հասարակական կացութեան  
նոր պայմաններ հաստատելու պահանջն էլ բնական ու  
անխուսափելի կերպով երեան կը գոյ, միանգամայն ան  
հրաժեշտ դարձներով հասարակական անտեսական առա  
ջադիմութեան արգելքների կատարեալ վերագումը

Ահա՛ թէ ինչիցն է առաջանուել ազգային անկախութեան պահանջմանը և ինչպէս պէտք է քննել ու լուսաբանել նրանն

Բայց տաճկական լծից աղաւավիլը կը լինի լոկ տուա  
ջին քայլը, նախարանն այն մեծ սօցիալական յեղափո  
փութեան, որից ապագայում չի խուսափիլ հայ ժողո  
վուրդը և որը նրան կը փրկէ հասպիտալի լծից ու հասա  
րակական ամեն աեսակ ճնշող պայմաններից և կը տայ  
վերջապէս այն ճշմարիտ աղաւառթիւնը, այն ճշմարիտ  
ընդհանուր բարօրութիւնը, որի համար այսօր ուզգակի  
կերպով մաքառում են ուեկի դարձացած ժողովուրդները  
և որն ի վերջո կը լինի ամեռջ մարդկութեան բազի  
ու բարեկեցութեան օրուանը.

Միւս՝ անգամ՝ մենք կը խօսենք, թէ աղքային անկախութեան գոյութեամբ հասարակական քաղաքական որպիսի պայմանները կարող կը վնեն հայ աշխատաւոր ժողովրդին միջոց տալ աշխատերու իր աւելի սուածանի

մաթեմատիկան ու վիրաբերական յաղթանակի պատրաստութեան  
համար և թէ խնդիմ է կայանում այդ աշխատութիւնը

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԹԻԿԱ

0.6 0.08 1.03 1.6 0.2 0.6 9.15, \*)

§ 6. In the name of the author, the title of the work, the publisher's name, and the date of publication.

( Յարուժակոթիւն և Հայոց թ. 13 ից հ. մեջ ու ց. )

Գիւղացւոյն ստացուածներ մշակութեան արտադրութիւնը, կինզանիներ ու հօգիբ ըլլալով՝ քիչ աճզամ պատրաստ հնչին գրամ կունենաց: Թէև կալի մէջ իր արտադրութեան յ մեծ մասը կազմուի կամ կը միանայ, սակայն և այնպէս քիչ չատ համբարած, ցորենով ալ կարելի է իր վիճակ բարելուէր, եթէ անզային հանգամանքներն ընթացապարհի և հազարդակցութեան միջոցներն արտած ման նախատեին, և այս խանզարուած ու դժուարութեանց մատնուած ըլլալով, իրազաք ցորեն խիստ ստարին գնով կը վեճառուին, և վաշխառու վաճառականաց ձեռքն անց ներով նոքա կը ենեն պէտք եղած վատուակը և երկրագործներ կը դրկուի կատ ոչնչով վարձատրիթեավ ձեռնունացն կը գտնուի, և յուծուի մեծաբանակ հարկերու վճարման տունի անկարող կը մնայ: Հարկանշան պաշտօնեացը յայնդամ շեն վարանիր ի գործ զնել գիւղացւոց վրայ այն ամեն պատիճներն, խճգութիւններն, տանջանքներն զար ինկավիդիցիան մացեր է և կամ մարէն իսկ չէ անցեր, առաջաւարակ անասնաց զամերը, ստորերկրեաց նկազները, ածխանոցները, թռնիբները և այլն բանտերու մերածուած են, յորում զգիւղացիս մերկացած, ձեռքերին ու ոտքեր նին շրաններով պրկած, խոնին մի զմիտի, մի և նայն յամանակ խարազանի և գոււղանի ստատիկ հարուածներ

բակ կազիոնելով ու հարուածելով անսոց մարմիններն, կամ մերկանդամ գլխիվայր շուաններով կամ գանա հարին Հարկահանք ձմեռները կիջնեն զիւղերը, եղանա կին խառաւթիւնն ու ցրտաթիւնը սորտաւական համարե լով զիւղացոց բանտարիկուած վայրերը ջուր կը կապէն կամ անսոց վրայ խալիխներուի և ամաններով ջուր կը լիցնեն թեղները կը մնան օրմրով այդ ցորտի ու սառոց ցի միջն այնպէս մերկ, նօթի, անսուալ, չառ անգամ գիր զի մեծերը, ընդ որս նաև շատեր մերկացուցած՝ զիւներ ները ժամերով թուղուն կապած բացօքեայ ձիւնի ու սառ նամանեաց մէջ. Այս պատիմքը ոչ թէ տւելի զզիւզացիս արաւափեցնելու համար ի զործ կը զրուին այդ մարդա կերպներու կողմէն, ոյլ չառ անգամ իսկ ի զուարծութիւն և ի զրուանս իրենց վայրենական. երեւակայութեանցը ու համոյից. Արգեօք կարելի՛ է մոռանալ երբ անցեալ տարի համանանան. խժգժութիւնը ի զործ զրուեցան քաղաքին հարաւ արեամուտը՝ թունու ս զաւառակի հայաբնակ գիւ շերու մէջ, ի մէջ այլոց և ափալթն զիւղը, յարում երեք

Հայեր սառոցի մէջ մնալով զիշերը կողախիթէ անմիջա պէս մեռան, և դարձեալ նոյն գիւղի մէջ երկու երիտա սարգ ևս Վարդեր և Մարդար մերկացեալ սիւ ներու վրաց կարուած գանահարութեամբ մեռան, Երբ դարձեալ ուրիշ զիւղի մը թունի րի մէջ խոնեցուցած ե, բրեր հոգիներ, որոց վրաց նաև ծածկած էին կոփարիչով, հաղիւ շնչարգիւ ըլլալէ ազատեցան, Աը յիշնք երբ այս տարի գիւղի մը մէջ հարկահան զինուրք թուրք ծերու նի գիւղացի մը՝ զլուխը սուքերուն հետ և ծեռքերը յի տին կապելով կը միռն սանտուխի մը վրաց եղած նեղ ծալիէ զէպի ներս, և ողնացարի ոսկորն ու կողերը ջախ ջախուելով, շարաչար կը մեռնի Ո՞լ կըսէ թէ Ներոնի դարն անցած է, երբ անցեալ տարի քաղաքիս արևելեան կոզմը 15 ժամ հեռու, հացաբնակ Ալաքիլիսէ զիւղին մէջ հայ գիւղացի մը վիայտակոյտի վրաց ողջ աղջ այրեցին և անոր հետ շատերու գէմքն, ճեռքերն ու զգիստներ խար կեցին ու խանձեցին Ասոնց բոլորը արդէն ժամանակին հողորդեր ենք „Հնակի”, որք արձագանք տուած են յիւրագայ և յԱմերիկա և տեղույս զեսպաններու միջոցաւ հաստատուած ու վաւերացուած:

Երբ գիւղացի մէկ կողմէ պաշտօնէից խմ դժութեանցը մասնուած կը տանջուին, միւս կողմէ իրենց ստացուած ներն, ուտեստի ու սերմնոցու ցորենը, ընտանի կենդա նիներն, աշխատակից եղներն, արօրն ու մաճը, արտերն, վերջապէս ինչ որ իրենց տարրուածի միջցն են բար բո վանդակ ի վաճառ հանուած են, իսկ իրենց կիներն, հարո ներ, աղջկունք, պատանիք զոհ մնացած այդ վայրացներու անդուսալ կրից . . . .

Գիւղացոց անսատն երբ գաւառակներու կեզրոնները առարւելով ի բացակացութեան գիւղացույն կը վաճառ, ուին ամենացած զներով զափթիաններու ձեռամբ. որք ըը նականարար չեն մոռանար նաև խորել սատակին մեծ մա սը. Հարկահան պաշտօննեցը երբ գիւղերը կիջնեն կան խաւ իրարու հետ խօսք մէկ ըրած են զիւղացույն թոյլ կողմերուն վրաց ձանրանալու և իրենց քատիններն սպարա րելու. երբ խումբերէն մին կերթոյ ացսինչ զիւղը, և կը պահանջէ մէծ մաքար, գիւղացիք քաջ զիստարով թէ Հակառակ սպարադային ինչ պատուհաններ կողմատէ իրենց, պաշտօնէին կը խոստանան մի գումար որ հեռանայ իրենց զիւղէն, և անմիջապէս ճարելով նոյն գումարը կը լիցու նեն նորա ճանկը, այո՛, նա կը հեռանայ, և զիւղացիք կը կարծն որ հեռացաւ նաև պատուհանը, և հաղիւ շաբաթ մը վերջ կուգայ ուրիշ խումբ մը, կամ աէտք է զոհացնել այն ես, և կամ . . . և ահա վերջապէս կը պայթի իրենց զիւղն այն խտդութիւնները զորս թուեցինք վերե. Մի և նոյն ժամանակ կը սիստիմիք ըսել որ զիւղացիք երբէք մերժեն իրենց տրոց վճարը, ո՛չ սուկայն պաշտօնէից ձեռ քըն է իրենց տուարը, ուստի անոնց խոճի մնացած է վճարուած ներկայիւ կամ չը ներկայիւ այս կամ այն տարուան պարտը, և զիւղերու հարկահանք ամեն տա րի նոյն պաշտօննեանները շըլլարվէ միւս տարին եկողը, անցեալը խորե չը վճարուած տեսնէ ու ինորոյ պա հանգէ ու . . . բարական միջոցներով գիւ-

զացիք որ, ինչպէս բախիք, որչափ որ այդ պաշտօնէ ից, ինչպէս նուի անոնց ձիերու ծախոն ալ կը հոգան, բայց և այնպէս իրրե հարկ ժողովուած զումարէն մեծ մասը զարձեալ վեր կանեն իրեն ճանապարհի, ձիու և անձնական ծախու ինչպէս այս նոյնպէս և անցեալ տարի հարկահան պաշտօննեցը թէ իրը ծախու և թէ կա չուոր մաս 3000 ոսկուց գումար մը վեր առած են քաղաքին հարաւային արեւմնեան կողմը գտնուած վաթթին, Մանճըլը խուանլու, Խուանլու, Աւալթն, Աէմէրէ թէ կը էկ և այլն հայարնակ զիւղերէն. Արդեօք հարկ է կը կինել մեր յաճախակի յերիւրած բանն թէ, զիւղացիք ևս անտար րեր մնացած չեն, այլ և բոլորած են թէ՛ տեղայս տառջ նորդի և թէ՛ պատրիարքարանի միջոցու տեղայս կառա վարութեան, սակայն անլուի մնացած, մինչև խոկ նոյն հարստահարիչ պաշտօննելով ալ չափնչաններով աւելի քա չափերուած և ոյժ տառած են. Մեր զիւղացիք, մեր մամեր ու պատաք, մեր զիւղանականներն կարծեմ լու զգացին ու համլցան:

Աւելորդ շիմք համարեկ մի քանի տող ևս նուիրել, մեր անասնավաճառներու և վաշխառուներու մատինին Գիւղացիք միայն իրենց մուռցած մեծցու ցած եղներով չեն բաւականաւար, որք այնքան ուժեղ չեն մինիք, տարուէ տարի քաղաքին անառնավաճառաք (սիւ րէկէն) Կարսի զաւառէն բաղմաթիւ նախիրներ բերի լով կը վաճառեն զիւղացույց գներն պայմաննեալ ժամա նակամիջոցներու մէջ վճարելու կամ չը նայերի որ կեն զանիններն մի բանի պատուի գնովի կուտան զիւղացիք երբ զիւղացիք որոշեալ պայմանագումըն շը կրնան վճա րել, ծաներ տակուններ կը գնեն վրայ, որ առ օր, ամիս առ ամիս կաւենայ այդ, կը բազմուպատիք, մի քանի հաւ րիւր նախնական գումարն հազարներու կը բարձրանայ. Մի օր ևս ունասնավաճառը իր հետ մի զափթիէ տառած — հոս փակագծով պէտք է ըսել որ ինչպէս անասնա վաճառք, նոյնպէս վաշխառուք, իրենց առնելիքներու մի մանը քազարի ոստիկանավախին խոստանուրի մի զափթիէ կառնեն, շատ անգամ ալ իրենց թուրք ծառային զափթիէ վել վել լութ կը հացցանեն և այնպէս կեր թան զիւղ — կը ներկայանայ զիւղացույն տանը. նա նոյն քան բանութեամբ կը վարիէ, որքան հարկահանք, ըս պակասեր իր ճեռքով ի վաճառ հանելու զիւղացույն ան շաբաթ և շաբաթական ստակուածներն. և շատ պարագայ ներու շարաչար զգուշապէս գանահարիք ինչպէս զիւ ղացույն անել տափնապալիք պարագայններուն, այնպէս և այս պահուն նորա զիւղին վերե պատրաստ է մի մարդ — վաշխառու զրամանակերը — որպէս զուարթուն հրեշտակ. մի նախախնամութիւն է կարծես, որն սիրոյօժար կը վճարէ զիւղացույն պարտըն, կազատէ զանի պարտասա հանջի ճիրաններէն թէկէ զիւղացիք պահ մը շունչ կառնէ. բայց յետոյ կը տեսնէ, որ իր տառածի նմաս և ուեէն և լեր սե ձութն է ընկեր ”: Աը հասկանայ որ նա ալ վաշ իստուն ոչ այնքան մարզափրական պարտաւորութենէ զիւղեալ որբան իր արիւն ծեկու բոււռն տեսնջն բոնը ւած նախախնամութիւն է դինքը:



Մեր գիւղացի հայրենակիցը մէկ կողմէ կաշկանդուած և պաշարուած թուրք կառավարութեան մեքենայութիւն ներուն մէջ, միւս կողմէ իրենց արմենակիցներու ինչպէս նաև իրենց վիճակակից թուրքերու, քիւրզերու, չէրքէզ. ներու զումերտուն և յափշտակութեանցը ենթարկուած, այլ և ս իրենց արդիւնաշատ արտերն ու հողեր, ծաղկա ւէտ ու ջրառատ մարգերն ու հովտներ չը կարեն հը բապուրել գիրենք, որք մեծ հարատութիւն կը բավանդա կեն իրենց ծոցի մէջ եթէ յարմար եղունակներով աբդիւնա տրուին. Վշակ մարգն զղուած վիրջապէս ամեն բանէ, կառ նէ ի ձեռին պանդխտութեան գաւաղանն, և պարկը կը անակին, արտասուաթոր աշօք, կը թողու իր ետին ծեր հայր ու մայրը, մանկամարդ հարսն ու զաւակունք, կը թողու զամէնքը, կանցնի սար ու ծոր, տար ու զուր, կանցնի Աւ ծովք, կերթայ Ստամոլ քաղաք, կամ Կովկաս և այլ տեղեր, ուր կոսպասէ իրեն վարձվոր աշխատաւորին ծանր աշխատանքն և զրկանքը. այդ տանջանաց մէջ կը մաշի իր առոյգ հասակն ու կը խամրի իր երիտասարդ գութիւն. երէկ գիւղահիւս երիտասարդ, այսօր զառամեալ ծերունի: Կանցնին տարիներ նա գեռ ազատած չէ իր կենսամաշ պարտքերէն, տիրութեամբ կը տեսնէ, և վիշտ ի սկսութիւնի, որ իր զաւակունք ու կին կը մաշին իրեն պէս պարտապահանջի ձեռքին տակ. կը մեռնի նա խանի մը ազտոտ անկիւնը, անդին իր օջախ կը քանդուի, կը փնանայ իր ընտանիք: Այս', տարուէ տարի գունդա գունդ երիտասարդներ կը դիմեն մեր գիւղերէն ի Պօլիս և այլուր. չը կայ տուն մը որու մի քանի անդամները պանդխտութեան ծոցը նետուած չըլլան. օրըսորէ նիւթապէս կը նիւնի մեր ժողովուրզը, կը նուազի բնական ա ճումը Ուրիշ կողմէ նկատուած է որ, հակառակ գիւղե րու օդին նպաստաւորութեան և գիւղացւոց առոյգ ու քաջ կազմութեանը, բնական մահք գիւղերու մէջ աւելի հանախադէալ են բան քաղաքը, հոն տարափոխիկ հիւան դութիւնք կը տիրեն տարւոյն մեծ մասը Մի քանի տար ուան մէջ նկատուած է որ միջին հաշւով գիւղերու մէջ 25. 40 առ հարիւր մահեր պատահած են, որ նուազ հա մեմատութիւն չէ հնտախտի մը ատեն պատահած մահե րու, և այս հաստատութիւն է գիւղացւոց տնտեսական խիստ անձուկ վիճակին, թշուառութեանց ու տառապա նաց:

Սոյն տողերն կը գնենք այստեղ իրրեւ պատկեր մը, նմուշ մը մեր ժողովրդեան կեսանքէն, գաղափար մը տալու անոր վիճակի մասին, գիտնալով որ ուրիշ գաւառաց մեր ազգայնոց վիճակը ևս նոյնն է, և թերեւս աւելի վատ թարագոյն քան ինչ որ պատկերեցինք: Արդարեւ տիսուր վիճակ, անմսիթար կացութիւն, որուն քաջ համոզուած ենք թէ դիւանագիտօրէն ոչ մի ելք կարելի է տալ քանի որ համոզուած ենք թէ թուրքի օրէնքն երկիք օրից ետք անգործադրելի է: Այս', թուրքն ետեէ է օր քան զօր զհայս ճնշելու և վիճացնելու միջացներն որոնելու և գոր ծադրելու իր մոնկողական քաղաքականութեամբ: Պատեէ է ըսել որ մեր դիւանագէտք մէկ կողմէ մեր ժողովրդեան մտքերն զրադիցնելով և իրենք ալ խաբուելով միւս

կողմէ թուրքին միջոց ու աստարէղ կընձեռն մեր ըզդ թայններն ամիակուու պնդելու ու զմեզ կաշկանդելու: Յարդ ի՞նչ կրցինք շահէի դիւանագիտական այնքան արո ոսցով աղմուկով - ոչինչ Սիմական շահ - ահա՛ եւրօ պական տէրութեանց քաղաքականութեան նշանաբանը: Եթէ հայ ժողովրդեան սնկախտութեան մէջ իրենց շահը տեսնեն, կօգտուին հանգամանքներէն և կօգնն մեր ազա տական ձգտման յաջողութեան: Բայց աղոր համար ալ հարկ է, որ մեր ազատական ձգտումներ արտայայտուին յեղափոխական ուղղութեամբ: Որպէս զի մեր ուղղութեան ոյժ տանք և զարգացնենք, հարկ է յարատուութեամբ աշխատախիլ յեղափոխական կազմակերպութիւններու համար Այլապէս - ոչինչ օգուտ:

27 յուլիս 1891.

Կոչնակ Սերաստիոյ.

### ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԻՑԻՍՅԵՅԻՑ.

- Երի գայի Խուռուսիչայ գաւառակի Արմտայ գիւղի դասասուն Խաչատուր Քէրիմէւան, Ակնայ գիւղերէն Լիճքի դասատուն Փինկեանցի Խաչատուր Մելքոն եան և իր որդին Աղեքսանդր, թուրք կառավարութեան կողմանէ ձերբակալուած ու Ակնայ մէջ բանտարկուած են: Ասոնք մատնուած են Լիճքի բնակիչներէն Յ. աղա անուն հարուստէ մը, ամբաստաներով թէ ասոնք յեղափոխականներ են և թէ իրմէ 50 սոկի ուղած են սպառնալեօք:

- Տիւրիկի մէջ անցեաները համի կ. Հ. անուամբ հայու մը մատնութեամբ՝ ձերբակալուած են հետեւեալ անձինք. Հայրապէտ պատուելի Սուքիաս և անուն որ է այժմ Սերբաստիոյ բանտը, Մելքոն Գայըքնեան, Երեմիա Թորիկեան և Միսակ Գըլեռնեան (յԱքիա պատուեալ Գրիգոր Գըլըճեանի եղայր), որք Տիւրիկի բանտին մէջ կը գտնուին:

- Սերբաստիոյ մէջ սեպտեմբերի 21 ին պարտապահանչ մը կերթայ պարտապահին և իր այսինչ գումարի պահանջը կուզէ. այն միջոցին երբ պարտասպանին ու պարտապահանջին միջն վէճ կը ծագի, պարտատէրը կըսէ թէ „ի՞նչ կայ, թագաւորն ալ պարտը կունենայ“ (այս սովորական խօսքը առածի կարգ անցած է): Այս միջոցին լրտես մը նոյն խօսքը լսերով բանտարկել կուտայ խեցը, որ ցարդ կը տքայ անդ: Իրրեւ ոճրագործ վճիռ տրուած է:

- Այս ամառ Վոյիս անուն քիւրդ աւագակապետն իր արբանեակներով բալուի Հաւաւ գիւղի վրայ յարձակեր է ցերեկ տաեն և 43 ոչխար յափշտակած փախչելու ժամանակ, մի քանի գիւղացի հայ երիտասարդներն ետեւ հասեր և սաստիկ ծեծ տալէ վերջ ոչխարներն ալ ամբողջովին ետ գարձուցեր են: Որ չանցնիր որ գիւ-

զերուն մէջ գողութիւն, մարդասպանութիւն, հրձիգ տեղի շուլդնանան թայց գիւղացիք ևս զգացած են ինքնապաշտ, պանութեան իրաւունքը: Անցեաները մի քանի ոստիկաններ՝ ծեծելով մեռոցած են Պաղտառար Նալա անտեսեանը չինդ գահեկանի համար: Այս դէպի վը բայց մի քանի հայ երիտասարդներ ալ զիշերայն այդ ոստիկաններու վրայ կը յարձակին և 2/3 թուրք կը սպան: Անձ: Այսոր վրայ քաղաքին գայտագամը կատագած իր հայ սպասաւորը, Վարտիրոս Արքաթ և ան անուն 17 տարիեկան պատանին այն աստիճան կը ծեծէ, որ խեղճը ծեծի տակ ուշաթափուելով գետին կիյնայ: Գայդա: Գամը ասով ալ գոհ չը մնար, և քաջկատելով կը բանտարկէ և լուր տարածել կուտայ քաղաքին մէջ, թէ Մարտիրոս իրմէ հիգ հարիւր գահեկան գողցած լինելուն՝ վեց ամիս բանտարկութեան գատապարտուածէ:

Արձակուեր են Ատանայի մէջ Հաճընցի բոլոր բանտարկեաները, որք ամբաստանուած էին թէ՝ Պօլսոյ անցեալ անուուան շարժման մէջ մասնակցողների հետ կապակցութիւն ունեցած են:

Հոկտեմբեր 31 ից մեզ հաղորդում են հետեւալը.

— Հայ ճամբորդներ Պօնասոի նաւահանգիստներէն Պօլիս զացած կամ վերադարձած միջացին իրենց անցագըրերը արձանագրել տալու համար շատ գժուագութիւններ կը կրեն: Այս շարթուս մէջ ալթը հայեր Պօլսէն իրենց հայրենիքը՝ Արարկիր՝ զացած ատեննին քաղաքս կը հանդիպին, որ կը ներկայացուին տեղոյս ոստիկանութեան: Փօլիսներէն մին անոնց անցագրերն նայելէ և զննելէ յետոյ՝ կը հրամայէ որ երթան և հէս ժամ վերջը գան իրենց անցագրերը ստանալու համար: Մեր ճամբորդք, հէս ժամ՝ յետոյ կը վերադարձան, փօլիսը զանոնք մէկիկ մէկիկ կը հարցաքննէ և մանրազնին խուզարկել կուտայ նոցա գրանները՝ յաւսալով վիշասակար թերթ կամ նամակ գտնելը թայց անպառը . . . և կսկսի անտեղի առարկութիւններ ընելով թէ այս անցագրերը ձերը շեն, դուք յեղափոխականներ էք և կերթաք ժողովուրդը զըր գուելու: Այսուհետեւ զանոնք ոստիկանաց կը յանձնէ որ բանտը տանին, մտածելով անշուշո որ այս սպիտով երկիւզ կը ներչնչէ ճամբորդաց: Յիշեալ ալթը հայերը ի լուր կազմին աւ կը պաղատին թէ իրենք հասարակ քաղաքացի ճամբորդներ են և իրենց հայրենիք կը վերագանան, թայց փօլիսը կուպիտ կերպով կրկին կը հրամայէ ոստիկանաց, որ շուտով բանտ տանին: Այդ միջոցին ճամբորդներէն մին զուշակելով փօլիսին միտքն ու նախատակը, կը մօտենայ նորա և կը առ առ ու թը մէճիտիչէն և թող մեզ: Փօլիսը իր նախատակին հասած էր Առանց երկար բարակ սնոտի պատճառաբանութեանց մէջ մտնելու կարձանագրէ անցագրերն և կը յանձնէ տէրերուն:

Մեզ հաղորդում են հետեւալը:

“Պատմեմ նոյնանման հաղար անցքերէն մի քանին, որ ցարդ անծանօթ միացած են:

Կեսարիոյ մօտերը Եվէրէ կ գիւղաքաղաքին Ցէնէ: Ոէ աւանին մէջ իր շահատակութեամբ ծանօթթ Միւս սէ լի մին որդին ցերեկ ժամանակ զինովեալով կը մտնէ հայոց թաղն սպառազին: Առաք եւ անուն մի հայու կը հանդիպի և ճամբու ստակ կը պահանջէ: Երբ կը մերժուի դաշոյնով կը վիրաւորէ զայն և նորա տունն երթարուէն կնոջմէն կը պահանջէ կերակուր ստակ և այլն Կին զը վանտէ սրիկայն դրացիաց օգնութեամբ:

Թուրք սրիկայն պարտէվներուն մէջէն խոյս տալով կը հանդիպի մի քանի հայ ձիւաւորաց, սրնոցմէ ճամբու ստակ կը պահանջէ, „ձեզ կոստնեմ” ըսելով ձիւաւոր առանց կարենութիւններն կը շարունակէ և երբ կը հանդիպի Յակոր Բառն արաւածեանի մահ սպառնալով նորէն ստակ կը պահանջէ: Յակոր յանձն չառնուր նորա պահանջը կոտարելու և ճախ ստինքի վրայ կրնագունի դաշոյնի հարուած մը որոյ վրայ սրիկայն կը յաջողի ստակ ներն կազմակել և խոյս տալը:

Թուրքը շարունակելու ճամբան հայ կօշկակարի մը կը հանդիպի մի նոյն երեսոյթներն կը կրկնուին, կօշկակարն ճարակատեալ քիչ մը ստակ կուտայ և զցգ մը կօշիկ կարել խոտանալով կը խուսափի անմիջական հարուածէն:

Այս վիասուածները ասանձին առանձին կը բողոքեն, սակայն կառավարութիւնը մի և նոյն ժամանակ սամփոյթ կը մնայ ձերբակալել զինհմու տաճիկը, որ իր շահատակութեանց ասպարէզը ազատ տեսնելով: Ա. Պօլսէն նոր եկած Յակոր Պարսա մէկ անուն մի երիտասարդի վրայ կը յարձակի և ստակ կը պահանջէ: Երբ կը մերժուի, դաշոյնով կուպանէ զիա:

Այս եղելութիւնք մէկ ժամու մէջ կը կատարուին, այն ուչու որ երբ բողոքարկութ կը զեկերէին կառավարական սպատօնատան սրակը, և ահա, կը տարածուի ծաղկահասակ երիտասարդի մահուան լուրը և սոսկալի աղուուկ և խոռովութիւնք կը լինին կառավարիչ պաշտօն եայն կը վանտէ հայերը և կը ցրուէ զայնս զինուորաց միջոցով, կեավուր եայդարասը իստէմէզ” ըսելով:

Սւելորդ է ըսելթէ շարազորդ թուրքն անպատճի կը մնայ: Նոյն ֆիւնէս աւանին մէջ կը գտնուի այրի մի կին, որ ամուսինն քանի մը տարի յառաջ քրզաց հարուածին տակ անխնայ սպաննուած էր, այրին զերձակութեամբ զրացելով կը հայթայթէր իր օրապահիկն:

Հինգ թուրք սրիկաններ զիշերայն սպառազին կը յարձակին նորա տան վրայ, կը բանարաբէն, վէրքեր կուտան և եղած ստակ կառնեն:

Այրի կինն մահուան դուռը հասած և բաղմաթիւ վէրքերով ծածկուած՝ զրացիք կը փութան ինաւանել զայն կառավարութեան կը բողոքուի, ստակ նա չուզեր պատժել շարագոյններն, մանաւանդ անոր համար որ շարագործաց զիմաւորն իտարէ” ժողովին անդամներէն միոյն աղքականն էր: Այն հաղին կը ցրած է իր վէրքերէն բուժ ամիսներով տանշանքներ քաշելէ վիրջն Եւ սակայն վեասուած է և միշտ հիւանդ:

Լուրեր կան,թէ Սրբարկիրի կայ բանտարկեալներէն շատերը արձակեր են, նոյ, տեղի կառավարութեան տունը մէկ գիշերուան մէջ բոլորովին այրուեր ու բանդուեր է:

Մեղ հազորդում են հետեւալ ուշագրաւ լուրը.

Տէրուիմի մէջ քիւրդ ցեղապետներէն մին իր տունը ըն գունած հինգ հայ հիւրերը բաներով իրր յեղափոխական ներ թուրը կառավարութեան յանձնած լինելուն ուրիշ հայերուն համակիր ցեղապետ մը զայրացած կասապատա կէ այդ ցեղապետին հոգի մրայ, ըսկերով թէ ազու մեր դարաւոր աւանդութեան ու սրբութեան հակառակ գոր ծեցիր, զի քու հիւրերդ յանձնեցիր": Այդ ճամանակ թուրք կառավարութիւնը իմանալով իրողութիւնը, երկու վաշո (800) զօրք օգնութեան կը զրկէ իր բարեկամ ցեղ զավետին: Այդ միջնորդին հայերուն համակիր քիւրդ ցեղա պետն ալ մի հնարապիտութիւն ի գործ կը զնէ: Իր գա ւասի մարզիկներէն երկու հարիւր հոգի կը զրկէ, որք կերթան թուրքի բարեկամ ցեղապետին քով և կըսն, թէ ա մենք ալ բարեկամ ենք թուրք կառավարութեան, եր թանք ջախչախսնք դանոնք և այլն", և այնպէս կը պայ մանաւորին որ զօրքերն առջեն ալիս գնան, իսկ իրնք ետե էն: Ազա կառաջնորդին զօրքերը զարան լարւած կիրձէն, որ համականութիւն կուտան իրենց նշանները: Եւ այդ պահուն հայոց բարեկամ աւանդորդող քիւրզերը ետե էն և իրենց պահուած ընկերներն առջեն մեծ ջարդ կուտան թուրք դինուրաց ու նոցա բարեկամ քրդաց, որք շորս հինգ հարիւր զոհ տալէ վերջ կը փախչին, թող նելով զէնքերը՝ զօրս կը զրաւուին անմիջապես:

Բաթումից հեռագրում են եւրոպական թերթերին, թէ այս վերջին ժամանակներում քիւրդ տւաղակներ Ալբաս տիայի շըջականերից յափշտակել տարել են բազմաթիւ հայ պատանիներ խոր յուսահասութեան մատնելով զո հերի ծնողներին ու բարեկամներին: Այս վերջինները գան գատներ են ուղղել իրենց պօլսարնակ հայրենակիցներին, այն նպատակով որ իմացնեն իրենց ցաւերը Եւրոպային արտասահմանում գանվող հայ հայրենասիրական մար մինների միջոցով Այս զիմումները արզիկելու համար տե զային իշխանութիւնները վերջերս ձերբակալել են բաւա կան թւով հայեր, որոնց մեծ մասը սերաստացիններ են Նրանցից մի քանիսը կասկածվում են թէ իրը սպառնա կան նամակներ են գրել հայոց պարիփարքին, որը բաւա կանանում է միայն շողորդութելով թիւրքիային, փոխանակ բարձրացնելու իր ձայնը այն պարսաւելի գործերի զէմ, որոնց ենթակայ է իր հօտը Հայտաստանում քիւրդերի չորհովով:

ՍՍ.ՐՍՍՓԸ ԲՈԼԳԱՐԻԱՅՑՈՒՄ.

Քոլգարական մինիստր Բելշնի սպանութեան գոր ծում իրեւ մասնակից ամբաստանված անձերի մայրերը, կիններն ու քոյրերը վերջնոր ուղղել են եւրոպական մեծ

պետութիւններին մի յիշատակազիր, որի մէջ բողոքում են այն փաստի դէմ, որ ամբաստանվածների բանտարկ ված դրութեանը վերջ չէ արվում մինչեւ այժմ և որ նը, բանք կառավարութեան կող մից ենթարկված են սոսկա մի վիճակի ու անսահլի խստաթիւնների: Առաջ ենք բեր րում այդ յիշատակազրի ամենակարեն կէտերը:

"Յօթն ամսից իվեր է, ինչ բանտարկվել են մեր որ զիքը, ամսումններն ու եղբայրները, և մենք միշտ յայս ունենիք, որ նրանց զրութիւնը կը բարւոքվիր ֆրազդա բար, պարտաւորմած ենք զրա հակառակը հասատելու: Սշքի առջև ունենալով այն բոլոր բարբարութիւնները որ կառավարվում են, օրէնքների ու Ամհմանազրութեան բոլոր բանաբարումները, մենք մեղ հարկադրված ենք համարում զիմել ձեզ պարոն գործակալ, աղերսակը յանուն մարդկանթեան միջամատել ձեր կառավարութեան մատ ինպաստ այն մարտիրոսների, որ բանտարկված են 1891 թ. մարտի 5 ից ի վեր: "

Այնուշեալ յիշատակազրիը երկարօրէն ներկայացը նում է րուգարական իշխանների կողմից զործադրված ծա նըր տարօրինութիւնները, այն սպարագանները, որոնց մէջ ձեր բակալվեցան պ. պ. Ալտանչեվ Բաշեվ, Արսէնիկեվ Բօրէ կօփ, Դրէմիկարօվ, Ջուղեվ, Գէօրգօվ, Տրէյկովիչ Մօլով, Կարավելով, Ցանկով, Օրոշանով և այլն, այն խուզարիութիւնները, որ տեղի են ունեցել հակառակ ամեն տեսակ օրէնքների, նախոկն մինիստր Ցանկօփի փականքի տակ զը նելը Վիդին քաղաքում, որտեղ նա պարտաւոր է օրը եր կու անգամ ներկայանալ սոտիկանութեան, հարցարնիչ մասնախմբի կազմութիւնը, որից դուրս է ձգված զատա կան իշխանութիւնը: Այս բոլորը ներկայացնելուց յետոյ յիշատակազրի ստորագրումներն աւելացնում են, թէ կա սամարութեան ընթացքը ցոյց է տալիս, որ նրա հական նպատակը բուն ոճրագործները փնտոելը չէ, այլ իսկա պէս այդ զործը պատրուակ բոներով կատաղաբար հալա ծել Բոլգարիայի այժմեան բէմիմի քաղաքական թշնամի ներին:

"Մեծ պետութիւնների վերահսկողութեան տակ զըր ված բուգարական իշխանապետութիւնը, շարունակում է յիշատակագիրը, վայրագութիւնների ասպարէղ է: Զեր աշքի տակ, պարոն գործակալ, կատարվում են միջին դա րիրին արժամի գործել:

"Որպէս զի զուք շը տարակուսէք, մենք մեղ թոյլ ենք տալիս յիշատակելու պ. Ստամբուլովի պաշտօնակա տարների ընթացքի բազմաթիւ օրինակներից մէկը: — Դիմիտրի Թիւֆէրչինիլ 18 տարեկան, Ռէսունից (Մա կեղծնիա), ձերբակալված մինիստր Բէլշնի սպանութիւ նից յետոյ, մի քանի անգամ ներարկվել է տանշանքների: Վերջինը դրէնց նրան կեանքից: Նրա ձեռների ու ոտքն ըի վրայ քարիւղ ածելուց յետոյ՝ ամրողապէս այրել են մայիսի 30, 31 -ի գիշերը: Տանջանքը տեղի է ունեցել ոս տիկանութեան երրորդ կօմիսարիայում:

"Յուղիս 9. ի թիւֆէրչինիցին փոխազրել են Ամբ սանգը հիւանդանոցը, որ նրա անունը գտնվում է 1891 թ. սեպտեմբեր 6. ի մեռածների ցանկում:

“Այս գէտքը, որ միակը չէ և որը Սօֆիայի բնակիչ ները կարողացել են իմանալ հակառակ ինկլիպիցիական բոլոր գաղտնապահութեան, որով քաղաքիվոծ են կառավարութեան ամեն գործերը, մեզ երկիւղ է ներշնչում մեր բանտարկիլած զաւակների, ամուսինների ու եղբայրների կեանքի վերաբերութեամբ Աւստի մենք խնդրում ենք ձեր բարեհաճոյ ու մարդասէր միջամտութիւնը ուժ մօտ որ հանրէ է, որպէս զի „Բնէշեփի սպանութեան“ գործը որքան կարելի է շուտ քննէլ իշխանութեան գատարաններում։ Ապասելով դատավարութեան օրը, մենք աղերսում ենք, որ մեզ թոյլատրվէ տեսնելու մեր թանկագին բանտարկվածներին։

“Այն հօթն ու կէս ամսից ի վեր, որ տեսում է այդ զըժը լազգ գործի կարգադրութիւնը, մեզ թվում է, թէ կառավարութիւնը կարողութիւն ունէր վերջ տալու այդ շափականց երկարած զարծին, մանաւանդ երբ նկատենք, որ ամեն տեսակ միջոցներ անխարի կերպով լոււ է համարել բանտարկվածներից խօսավանութիւններ կողղելու համար”

Այդպէս է վերջանում այդ յիշատակագիրը, աւելի ճիշգ՝ աղերսագիրը, որը կարդալիս, մեզ թվում է թէ փոխական միջանց Տաճկաստան, տաճիկ բռնակալ կառավարութեան ձեսքի տակ, նրա վայրագութիւններին տկանաւանս հանդիսանալով Բայց այդ սպառագիր իրականութեան ասպարէցն այլ տեղ է, հենց նոյն իսկ տաճիկ բռնակարութեան լուծը թօթափած մի ժողովրդի մէջ որ ունի իր օրէնքները, իր սահմանադրութիւնը, — “աղջան” Բոլգարիան Դառնաւագաւառութիւնը, հայութիւնը այդ իրականութիւնը, հեղունութիւնը մի քաջ ու անձնուրաց ժողովրդի հասցէնն, որ այնքան արիւն թափեց ու այնքան ձանք ժորգութիւնների բովից անցաւ իր անկախութիւնը ձեռք բերելու համար Ընկած մի զրեթէ լիազօր իշխանի ձեռքի տակ և այդ իշխանին շրջապատող “հարազատ” կահավարութիւն կոչված մի խմբակի, մէկ անհատ մինիս տրքի կամքի խաղալիք, հրամանների հոււ կատարող ու ճշշումների ենթակայ, — այդ ժողովուրգն, աւազը չէ կարող պարծինալ ո՛չ իր անկախութեամբ և ո՛չ իր սահմանադրութեամբ Խնչո՞ւ, Որովհետեւ այդ սահմանադրութիւնը մի սարգոստայն է, որ կապած կապկարած է ժողովրդի աղաւատութիւնը, Եւ տեսնելով այդ բոլորը, հայը պէտք է ակամայ մտածէ, թէ, այո՛, Հայի համար լու է, պէտք է, անհրաժեշտ է ձեռք բերել աղջային անկախութիւն, բայց մի ձեռքով ծափ շես տալ լաւ է, պէտք է ու անհրաժեշտ է, օգտակար ու խելացի է աղջային անկախութիւնը, բայց միայն այն անկախութիւնը, որն սժամանակ է այնպիսի սահմանադրական կարգերով, որ ժողովրդի աղջատութեան ու առաջադիմութեան ըստ ինքնան նպաստաւոր մինելուց զատ, միջոցներ տան արգելք զնելու կառավարութեան առջև, երբ սարունարարութիւնը զորձէ ընդգէմ օրէնքների, նոյն իրեն սահմանադրութեան կանոնների և այն Այդպիսի սահմանադրութիւն կարող է լինել ընդարձակ ու ամեկավարական սահմանադրութիւնը, Եւ մենք աւելորդ չենք համարում զիմել Հայերից ում հարկն է, ասելով։ Աvis aux intéressés . . .

Մէկ ուրիշ կէտ ևս վերև բերած յիշատակագիրը, որ ուղղված է եւրօպական եսամոլ պիտութիւններին, բաւական աղմուկ հանեց եւրօպական լրագիրներում, որքն սակայն դարմանալի ներդաշնակ խմբերգով յայտն

ցին մի կարծիք, որ կարող ենք ամփոփել հետեւալ բառերում։ “Մենք ինքներս ունենք մեր ցաւը” Եւրօպայի սրտում գտնված, Եւրօպայի վերահսկողութեան ու հովանաւորութեան տակ եղած մի ժողովրդի տանջանքի աղջական այդպիսի լրտի, բայց և, աւազով շատ հասկանալի անտարբերութեամբ ընդունելը, միանգամայն նշանաւոր ու բնարուց է, “Ջըկայ քեզ համար Եւրօպա։ Նա իրեն համար է միայն”, ուղելով իր խոռոք ըօլգար ժողովրդին, բացականչում է Փրանսիական մի թիրթ։ Պատկանական աղերթի աղերսագրի մատուցող հայ դիւնագէտներ, — Avis aux intéressés . . .

Կուսակցութեանս Գանձարանում չնորհակալութեամբ ստացվել են հետեւալ զումարները . . .

Տաճկ կ. քաղաքից Յ. Մ. ից 4 րուրլ կ. Պ. ք ից Արգէսի ձեռքով յիսուն հինգ գահեկան . . . Եզիսուտ, Գահ. ք. ից Արեգիի միջոցով 157 Փրանկ, Ճ. Տ. Ս. Ա. ից 15Փր. յիսուն սանտիմ . . . Բոլգար . Քերմանկ աւանից Վեհունիի ձեռքով 38 Փր., յիսուն սանտիմ. ( երեք անձերից տասնական Փր. և մի տաճկահայ ճանապարհորդից 8 Փր. 15 սանտ. ) Ա. ք. ի Մամնամիւզից Կ. Ա. . . ի ձեռքով 60 Փր. . . Բուման. Գ. ք. ից Փարաւունի եղթօրից 2 Փր. յիսուն սանտիմ . . . Ամերիկայի Եօնկէրս ք. ից Յ. Սուլ. . . ից 2 դոլլար . . . Բումաստանի . Բ. ք. ից Հայկազն Զինակրի միջոցով Արամից 6 րբ. . . Որմազը րից 3 րբ. . . Աստղիկից 2 րբ. . . Ծերունի Ս. բաքսից 50 րուբլին

Վրիսկան աղակի սոյն տարվաց թթ. 8 և 12 ի նուիրատութեան ցուցակում փոխանակ նոր Արձուի գրված է Նոր Արցախի

Հնչակի սոյն տարվաց թթ. 12, Հ. . . Եղ. . . եանից փոխանակ 3 րուբիի գրված է 30 րբ.

— Յայտնում ենք, որ կուսակցութեանս Գանձարանում ստացված բոլոր զումարները միշտ իրենց ժամանակին յայտարարվում են թերթիս մէջ, ԶՀ յայտարարված գումարները ստացված չեն։

Սոյն աղջի առթով Հարկ ենք համարում հաղորդել ո. բոնց որ հարկն է, որ Եզիսուտի Գահ. քաղաքից պ. Ա. բակիի միջոցով երեք անգամ կուսակցութեանս Գանձարանը դիմում կարգաված է անկախութիւնների ամրող ցուցակը ըստ տացված, վաւերացված և յիշտ է ուղարկված իրեն։

Խնդրում ենք ուշադրութիւն դարձնել թերթիս իրեմ բագրութեան հասցէների վրայ։

Յօդուածներ, թղթակցութիւններ և տեղեկութիւններ ուղարկել հետեւալ հասցէով։

Paris. (France). — M. Beniard. Poste restante.

Իսկ դրամական մանդատներ (mandat) ուղարկել այս հասցէով։

Eaux. Vives. (Suisse). — M. Daniel. Poste restante.

Լօնդօն. Հայկական աղաւատ տալարան.